700

1. Թագավորը անխիղճ ու դաժան,
Բաբելոնի Դուրային դաշտում
Ծինեց իր կուռքը՝ ոսկի արձան,
Եվ նրանով էր շնչում, ապրում,
Ծնչում, ապրում: (2)

2. Հրամաններ բազում ու անթիվ,
Թե՝ ողջ ազգերն ու լեզուները
Թող գան ու երկրպագեն կուռքին,
Որին պաշտում էր թագավորը՝
Ոսկի արձան: (2)

3. Երկրպագելու չեկան միայն
Սեդրակ, Միսակ,
Հաբեթնակովը,
Նրանք ունեին կենդանի Աստված՝
Աստծո Որդի Հիսուս Քրիստոսը,
Աստծո Որդի: (2)

4. Թագավորը, շատ խիստ զայրացած,
Արձակեց մի դաժան հրաման՝
Կրակը գցել եղբայրներին,
Նրանց չի փրկի ոչ մի Աստված:
- Փրկի՛ր, Աստվա՛ծ: (2)

5. Վառվում էր կրակով հնոցը:
Սեդրակ, Միսակ, Հաբեթնակովը
Իրենց Աստծուն էին աղաղակում.
«Տե՛ր, մեր անձը Քեզ ենք նվիրում»:
- Արի՛, Հիսո՛ւս: (2)

6. - Երեքի տեղ չորսն են շրջում
Հրա՛շք. տե՛ս դու, ո՛վ մեծ թագավոր:
Նրանք քայլում են թեժ կրակում,
Մեկը նման էր Աստծո Որդուն:
Փրկեց Աստված: (2)

7. Կանչեց թագավորը դողալով.
- Դո՛ւրս եկեք, եղբայրնե՛ր, կրակից,
Իրոք կենդանի է ձեր Աստված,
Մենք էլ կգանք երկրպագելու:
Փառք Քեզ Հիսուս (2):